

կողմ հայաբոյսերը պատում են հորիզոնը զմրուխտի կենդանի գոյներով:

Երբ երեկոն աւելի մօտ է տարածւում երկրի վրայ, վայրի բաղերը դուրս են թռչում մօտակայ շամբերից, և երբ եղէգները քամուց յուզուած սարսռում են հանդարտիկ, նրանք սոսկահար փախչում են իրանց օդային շաւիղներով:

Արճիթներից հեռու, պոլսայի խորութեան մէջ, կանգնում է չարդան՝ առանձնացած իր փլիլկած ծինելոյցով: Մարաւի բէսյարները, որոնք այլեայլ ճանապարհներով դէպի շուկայ են գնում, կանգնում են այնտեղ:

Թմբիկների յած անտառների մէջ տեղ, չարդայի մօտիկ, դեղին աւազի մէջ, թաւուտի խորքում, բոյն է դրել սրասոյլ շահէնը՝ խոյս տալով աւերիչ երեխաների ձեռքից:

Կնիւններն այնտեղ աճում են տխուր, ուղտափուշի ծաղիկները ճօճւում են և իրանց սուր փշերի ներքև խատուտիկ մողէսները թմբած պառկել են արևի տակ:

Հեռուն, ուր երկինք բոցավառ երկրի հետ միախառնուել է, պտղատու ծառերի շարքեր նայում են մշուշի միջից, որ իրանց մի ինչ-որ կապտաւուն գոյն է տալիս: Երանցից վերև, ինչպէս մի սիւն, բարձրանում է գիւղի զանգակատունը՝ կանաչ արօտների միջից:

Հիանալի ես դու ինձ համար, ո՛վ դաշտավայրերի երկիր: Այդտեղ է, որ իմ օրօրոյն օրօրեցին, այդտեղ է, որ ես կեանքի մէջ մտայ: Այդտեղ է, որ մի օր պատանքն ինձ պիտի փաթաթէ և այդտեղ՝ պիտի բարձրանայ իմ մահու հողակոյտը:

β

Մ Ո Հ Ա Չ \*

(Kisfaludy Károly-ից)

Քեզ ողջունում եմ հառաչելով, ո՛վ Մոհաչ, ո՛վ եղբրական դաշտ՝ կարմրած մեր գիւլեաղների արիւնով, մեր ազգային փառքի ընդարձակ գերեզման, ողջոյն քեզ:

Սոսկալի ապականութիւնը իր ազուաւի թեւերով տարածւում է քո վրայ, իր սոսկալի կատաղութեան մէջ նա քո վրայ:

\*) Հունգարական մի նշանաւոր դաշտ, ուր Հունգարիան կորցրեց իր ազատութիւնը 1526 թուին:

թափեց իր բոլոր աւերիչ ուժը. և իր կոյր յաղթութեան հետքը անյաւ մեր կտրիճ կոռուղիների սակորնների վրայից:

Տամորի, փառաւոր զօրապետ, ինչու թողեցիր դու քո արքեպիսկոպոսական աթոռը: Փողքը, մեր հայրենիքի ծաղիկը չը պէտք է մեռնէր քեզ հետ: Կոռու սաստկութիւնը սլացրեց քեզ դէպի մի անխուսափելի կոտորած: Որքան զիւցազներ սպանուեցան քո պատճառով: Մէհ, քո երկիրը շատ նեղ էր քեզ համար... որքան փոքր և լռին է այսօր քո վերջին բնակարանը: Վերջացան քո յոխորտանքները. ժանգն ուտում է քո զէնքերը: Հանգչիր դու այժմ. խարուսեի բախտը փորձեց քո վրայ իր քմահաճոյքները: Թող հաշտարար գերեզմանը ծածկէ թեթեւակի քո փոշին:

Որքան մատաղ սրտեր, լի քաղցր յոյսերով, հնձեց այստեղ պատերազմի անողոք դիպումածը. որքան երիտասարդ կոռուղիներ իրանց կեանքի գարնան մէջ վաղահաս մահ գտան այնտեղ, մինչդեռ երջանկութիւնը մինչեւ այն ժամանակ նրանց մեղմիկ օրօրել էր իր ծոցում: Նրանք այստեղ հանգչում են, իրանց սուկորները զրուած և իրանց հակայ հասակը կոխտուած իրանց փախտական ձիերի պայտերով:

Սիրունին չը պիտի այլ եւս խաղայ նրա գեղեցիկ վարսերի խարտեայ փունջերով, որ այժմ արիւնով ու ցեխով թաթախուած են: Ի դուր գեղեցիկն սպասում է ճանապարհին՝ թարմ պսակը ձեռքին: Լսում է վախով և յուսով թէ՛ իր զիւցազնը դեռ չի՞ գալիս արդեօք: Տերեւի շրջիւնը յիշեցնում է իրան իր սէրը: Նայում է միշտ. իր այտերը բոցավառ են. իր կուրծքը բարձրանում է դողդոջ, բայց իր նայուածքներն ի դուր են աշխատում հեռու մշուշը թափանցել: Իր սիրելին չի գալիս. նա ենթակայ է լինում խոր վշտի. վերջապէս լսում է Մոհայի ձախորդութիւնը և իբրեւ մի մատղաշ ծաղիկ՝ նա թառամում է, գեղեցիկ երիտասարդ աղջիկը, մի դառն տխրութեամբ:

Երեկոյեան գեփիւռները անցնում են շնչալով իր գերեզմանի վրայից. և հաւատարմութեան հրեշտակը պահպանում է իր աճիւնը:

Ո՛րքան զիւցազներ, արժանի դարեր ապրելու, ննջում են այստեղ մոռացուած. չը կայ մինչեւ իսկ մի քար՝ իրանց վերջին օթեւանը ցոյց տալու: Կոռուցան իրանց նախնեաց ազատութեան համար առեական քաջութեամբ, անսանձ կատաղութեամբ թաթախելով իրանց սրերն արեան մէջ:

Բայց ո՛ր է նա, այն հերոսը՝ որին հազար բազուկներ չեն կարող ընկձել: Կուռում է դիակների զէզերի մէջ՝ զգալով իր ուժերի թուլանալը: Իր կատաղի նժոյգը չի կրում այլ եւս իր

սովորական բեռը՝ խրխնջում է, աքացում, գլուխը խոնարհեցնում, իր բաշը ծածանում է: Փակնչում է դէպի տուն, իր տիրոջ կորուստն իմացնելու:

Թող իր կինը, սրտաբեկ, լայ հեծեծելով, մինչեւ որ իր արչոնքները չորանան և ինքն էլ իր հաւատարիմ ամուսնուն հետեւի:

Եւ այդ աւերուած տնից՝ միայն փրատակներ են մնում: Կաղնին՝ որ հպարտ դիմագրաւում է մրրկին, իր անկման ժամանակ հետն է տանում իր կանաչ ճիւղերը:

Ո՛րչափ քաջեր մեռան այսպէս: Միայն բախտաւորն է գտնում իր վարձը: Յաղթուածի աստղը անհետանում է իր հետ: Կորան նրանք մամոտ փոսերի մէջ և մոռացութեան խաւարը ծածկում է նրանց անունները:

Հովիւը պառկում է խոտերի վրայ և մեղմիկ երգելով արածացնում իր հօտը: Նա չը գիտէ թէ այնքան հերոսների աճիւնների վրայ է հանգչում: Բայց նա թուլանում է, տխուր երգը խուսափում է իր չրթունքներից:— Հերոսների ստուերներն են որ ներշնչում են նրան:

Պատերազմի դաշտի վրայ մտախոհ ճանապարհորդը գնում է՝ մտածելով մարդկային ճակատագրի անհաստատութեան վրայ: Նա նայում է և տխրում, աչքերը գետին են խոնարհուել, և իր սիրտն արիւնում է իր բաց վէրքերով:

Այստեղ, ուր երեկոյեան ճառագայթները լուսաւորում են այս առուակից բարձրացած գոլորշին, իբր թէ ինձնից ծածկուել ուզէր, այնտեղ է Լուսովիկոսը (Lajos), մեր դժբախտ թագաւորը, դառն յիշատակներով լի, իր արայրապատ նժոյգի ծանրութեան տակ: Իզուր նա տարածում է իր ձեռները, չը կայ մէկը, որ նրան բարձրացնի կոռուղներն ընկել են, չը կայ մէկը, որ ազատի անբախտին... Անդունդը բացում է, իր հարուստ զէնքերի ոսկին դժգունում է, և իր ջախջախուած մարմինը ծածկուել է փրփուրով և ցեխով:

Սոսկալի է այդպիսի մահը, բայց դու այդպէս ընկար, ո՞վ արքայական մատաղ արծիւ: Ու քո օրհասի հետ, հունգարական երկնքի արեւը մայր մտաւ երկար: Դու երիտասարդ էիր, չէիր վախում անդունդից և սոսկալի կերպով վճարեցիր քո հարկը ընութեան: Թող իսողաղ ննջի քո աճիւնը: Աւճաղ, անմիաբանութիւնը և բիրտ նախանձն էր, որ բոլոր այս դժբախտութիւնների պատճառ եղաւ: Երբ խորտակուեցաւ մեր միութիւնը՝ անհետացաւ և մեր ուժը, և մեր լքեալ հայրենիքին չղթաներ կուսուեցան: Թշնամին չէր, այլ քո հարազատ սրգին էր՝ որ այս հարուածը տուեց իրան: Ո՞վ եղերական յիշատակների երկիր, դու

աղբիւր դարձար բազմաթիւ տրտունջների, որոնք, միայնակ քո ճահճուտ դաշտերի մեռելական մահարձանն են: Բուդայի պարիսպները հեծում էին փառահեղ Սուլէյմանի հպարտութեան առջեւ. և որչափ աւերումներ հասցրեց մեզ իր վայրենի կատաղութեան անյադութիւնը: Քանի քանի բանտարկեալներ իջան Դանուբի վճիտ ալիքների տակ: Սեպհականութիւնն անհետացաւ. հունգարացին օտար էր իր տան մէջ. և մահիկը փայլում էր մեր քաղաքների աշտարակների վրայ:

Հեռու գնացէք, ախո՛ւր պատկերներ, հեռու գնացէք, խաւարային տեսիլներ:

Այնքան վտանգներից յետոյ մի նոր օր է փայլում մեր վրայ: Հունգարը դեռ ապրում է: Բուդան կանգնած է տակաւին: Անցեալը մեզ համար թող օրինակ լինի: Եւ լցուած մի վառ սիրով մեր հայրենիքի համար, թող մեր աչքերը դէպի առանջ նայեն:

Եւ դո՛ւ, ո՛վ եղերական դաշտ, կանաչի՛ր նորից նուիրական խաղաղութեան ծոցում: Մոհաչ, վաղեմի գերեզման մեր ազգային մեծութեան:

Թարգմ. Փրանս. Հ. ԱՃԱՌԵԱՆ